

ՔՅՈՌՕՂԼՈՒ ԷՊՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՇՈՒՐՁ

Տարածաշրջանի մի շարք երկրներում և ժողովուրդների մոտ (թուրքեր, ադրբեջանցիներ, թուրքմեններ, ուզբեկներ, դազախներ, տաջիկներ, հայեր, քրդեր, վրացիներ, դադստանցիներ և այլն) մեծ տարածում ունի Քյոռոզու էպոսը, որի սկզբնավորումն ընդունված է համարել 17-րդ դարը: Առավելապես տարածված է այն կարծիքը, որ էպոսը թուրքական է, և տարբեր ուսումնասիրողներ այն բաժանում են երկու՝ արևմտյան ու արևելյան խմբերի⁵⁵⁷: Մեզանում Քյոռոզու էպոսի ամենախորագիտակ ուսումնասիրողներից մեկը՝ Սամվել Ռամազյանը, անդրադառնալով և համադրելով երկու խմբերը նշում է, որ արևմտյան տարբերակում նկարագրվում են. «Այսրկովկասում և Փոքր Ասիայում 16-17-րդ դդ. տեղի ունեցած անցքերը. այն է՝ ջալալիների (ջելալիների) ապստամբությունները»⁵⁵⁸: Սույն հոդվածում մենք նպատակ ունենք քննել էպոսի հայկական հիմքի շուրջ եղած որոշ վարկածներ, դիտարկել դրանց յուրահատկությունները և պատմական հենքը:

Նկատենք, որ Քյոռոզու էպոսի հերոսի ազգային պատկանելության հարցը եղել է շատ հետազոտողների ուշադրության կենտրոնում, և այդ մասին կան տարբեր վարկածներ. ուսումնասիրող Վ. Ժիրմունսկին նշում է. «*Հերոսական ասքի յուրաքանչյուր ստեղծագործական ազգային տարբերակն իրավամբ պատկանում է այն ստեղծած ժողովրդին*»⁵⁵⁹: Ս. Ռամազյանն ավելի մանրամասնելով վերը նշվածը և անելով էպոսի տեղայնացման, ազգայնացման մասին դիտարկումներ՝ տալիս է չափազանց դիպուկ և հարցի էությունն արտահայտող գնահատական. «*Ազգային պատումներում, սովորաբար, բայց ոչ միշտ, գլխավոր հերոսին վերագրվում է համապատասխան ազգություն*»⁵⁶⁰: Մի շարք ուսումնասիրողների մոտ առկա են վերլուծություններ և կասկածներ էպոսում «հայկական հետքի» մասին, բացի այդ էպոսում կան հայ կերպարներ⁵⁶¹, ինչի մասին Ս. Ռամազյանը կարծիք է հայտնում. «*Բնավ էլ պատահական չէ հայկական կերպարների և, ընդհանրապես, հայերի հետ կապված դրվագների առկայությունը*»⁵⁶²: Այս կարծիքի համար օբյեկտիվ հիմք է ծառայում այն իրողությունը, որ տարբեր աղբյուրներում խոսվում

⁵⁵⁷ Ռամազյան Ս., Քյոռոզի, Իրան-Նամե, թիւ 4-5, Երևան, 1996, էջ 31: Сафарян Ал., Согомонян А., Об эпохе “Героглы-Кер-Оглы” и его Армянских версиях, Сюжет Героглы и литература востока, Материалы международной научной конференции 23-25 сентября 2009г., Дашогуз, 2009, стр. 360.

⁵⁵⁸ Ռամազյան Ս., Քյոռոզի, Իրան-Նամե, թիւ 4-5, Երևան, 1996, էջ 31:

⁵⁵⁹ Նույն տեղում:

⁵⁶⁰ Նույն տեղում:

⁵⁶¹ Քյոռոզու էպոսի մեջ կան ակնարկներ, որ նա հայերի նկատմամբ որոշակի լավ վերաբերմունք ունի, օրինակ՝ իբրև թե նրան են պատկանում հետևյալ խոսքերը «Միրում եմ ես հայի խաչը»: Տե՛ս, Ահյան Ս., Կույր հոր ու իր տառապյալ որդիների առասպելական թեման և Քյոռոզի, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1997, թիվ 3 (93), էջ 152, թիվ 12 տողատակ:

⁵⁶² Ռամազյան Ս., Քյոռոզի (հոդված երկրորդ), Իրան-Նամե, թիւ 1, Երևան, 1997, էջ 18:

է ջալալիական շարժումներին հայերի հնարավոր մասնակցության մասին⁵⁶³: Ս. Ռամազյանը մեջբերում է Երեմիա Քյումուրճյանի երկից մի հատված, որտեղ պատմվում է ջալալիներին միացած հայերի և նրանց կրոնափոխության մասին.

«Շատք ի Հայոց զայս արարին

Էւ ոչ միայն գտունսն թողեալ,

Եւ սուրբ հաւատն ուրանային (ընդգծումը մերն է Ռ.Մ.)⁵⁶⁴»

Տարբեր ուսումնասիրողներ եկել են այն եզրահանգման, որ Քյոռոզլուի պատմական նախատիպն իրական հերոս է, որը հավանաբար ջալալիական շարժման ակտիվ գործիչներից և առաջնորդներից է: Ընդհանրապես էպոսի հերոսներից շատերը իրական անձնավորություններ են եղել և ունեն պատմական նախատիպեր⁵⁶⁵: Էպոսի գլխավոր հերոսը՝ Քյոռոզլուն, «բարի ավագակի» կամ ավագակի ռոբինհուդյան տիպի օրինակներից է, ով սկզբում անձնական վրեժից դրդված ելնում է պայքարի, իսկ հետագայում այդ պայքարը ստանում է ավելի լայն, «ինստիտուցիոնալ» բնույթ: Հերոսի անունը՝ Քյոռոզլու, իր մեջ պարունակում է նրա պայքարի դուրս գալու հիմնական մոտիվը. այն է՝ նրա հորը անարդար կերպով կուրացրել է բռնակալը և նա որպես կույրի որդի (թուրքերեն՝ *kör oğlu*) դուրս է եկել պայքարի: Էպոսի գերակշիռ տարբերակներում դեպքերի սկիզբ համարվում է այն, որ հերոսի հորը բռնակալ տիրակալը կուրացնում է ձիու հետ կապված մի պատմության պատճառով: Ազգագրագետ Արմեն Պետրոսյանը անդրադառնալով ընդհանրապես առասպելաբանության մեջ ձիու կերպարին նշում է. *«Հնդեվրոպական առասպելաբանության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ձին՝ կապված հնդեվրոպացիների տնտեսության և տեղաշարժի մեջ ունեցած դերի հետ»*⁵⁶⁶: Սփյուռքահայ ուսումնասիրող Հ. Բերբերյանը նկատում է, որ. *«Կոյրերու, կոյրերու զաւակներու եւ կոյրերու վրիժառութեան գրոյցներ գոյութիւն ունին աշխարհի ամէն կողմը»*⁵⁶⁷: Նա հավելում է, որ կույրի որդիների վերաբերյալ գրույցներում կա տարածված ընդհանրություն. *«Տէր մը կամ թագաւոր մը անարդարօրէն կը կուրցնէ, բարկութեամբ կամ իր իշխանութիւնը չարաչար գործածելով, իր ծառաներէն կամ վասալներէն մին»*⁵⁶⁸:

Ինչպես նշվեց վերևում, տարբեր ուսումնասիրողներ ընդհանրություններ են նկատել ինչպես էպոսի մոտիվների, այնպես էլ Քյոռոզլու կերպարի և 4-րդ դարում Հայոց թագավորությունում տեղի ունեցած անցքերի և կոնկրետ անձանց հետ: Ըստ այդմ, կա վարկած, որ էպոսի պատմական հիմքը կապված է ոչ այնքան 16-17-րդ դարերի ջալալիների ապստամբության, որքան 4-րդ դարում Հայոց թագավորությունում տեղի ունեցած որոշակի դեպքերի հետ: Այսպես, վերհիշելով 4-րդ դարի Հայոց թագավորության

⁵⁶³ Տե՛ս, Ջուլայան Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 183-184:

⁵⁶⁴ Ռամազյան Ս., Քյոռոզլի (հողված չորրորդ), Իրան-Նամե, թիւ 4-5-6, Երևան, 1997, էջ 55:

⁵⁶⁵ Ռամազյան Ս., Քյոռոզլի (հողված հինգերորդ), Իրան-Նամե, թիւ 1-2-3, Երևան, 1998, էջ 80:

⁵⁶⁶ Պետրոսյան Ա., Հայկական էպոսի հնագույն ակունքները. հնդեվրոպական առասպելներ եւ պատմական նախատիպեր, Երևան, 1997, էջ 10:

⁵⁶⁷ Պերպերեան Հ., Արշակ Բ. եւ Քեօրօզլու, (արտատպուած Ապագայ շարաթաթերթէն սրբագրութիւններով եւ յաւելուածներով) Փարիզ, 1938, էջ 7:

⁵⁶⁸ Նույն տեղում:

պատմության որոշ դրվագներ՝ տեսնում ենք, որ Հայոց թագավոր Տիրան Արշակունին (338-350թթ.) կուրացվում է պարսից արքայի կամ մարզպանի կողմից և դրա պատճառը կապված է լինում ձիու հետ: Ըստ Փավստոս Բուզանդի, Տիրան թագավորի սենեկապետ Փիսակը Ատրպատականում նստող պարսից «բարձր պաշտոնյա», այն է՝ մարզպան Շապուհ-Վարազին⁵⁶⁹ պատմում է հայոց արքայի հիանալի ձիու մասին և հրահրում նրանից այն նվեր պահանջել: Ձիու նկարագրությունը ևս առասպելական տարրեր է պարունակում. «Այն ժամանակ Տիրան թագավորը մի ձի ուներ, որի վրա բոլորը զարմանում էին: Այդ ձին մուգ-շագանակագույն և պուպուտիկ էր, ուժով լի, հոյակապ, հռչակված, բոլոր ձիերից մեծ և բարձր, տեսքով բոլորից գեղեցիկ ու սիրուն, որի նման ուրիշը չկար»⁵⁷⁰: Ի պատասխան Շապուհ-Վարազի պահանջի, Տիրան թագավորը նրան ուղարկում է իր ձիուն նման, սակայն ուրիշ մի ձի, ինչն էլ պատճառ է դառնում թշնամանքի: Ի վերջո հայոց արքային պարսիկները դավադիր կերպով ձերբակալում են և ըստ Փավստոսի՝ Դալարիք գյուղում Շապուհ-Վարազի հրամանով կուրացնում⁵⁷¹: Պատմահայր Մովսես Խորենացին ևս նկարագրում է այս դրվագը, սակայն փոքր-ինչ այլ մանրամասնություններով: Ըստ Խորենացու, Տիրանին իր մոտ է կանչում պարսից արքայից-արքա Շապուհը, որը նրան «նախատեց խոսքերով իր գորքերի դեմ հանդիման և նրա աչքերը կուրացրեց»⁵⁷²:

Գալով Քյոոզլու էպոսին նկատենք, որ հերոսի հորը՝ Միրզա Սարրաֆին բռնակալ թագավորը կուրացնում է կրկին ձիու հետ կապված պատմության պատճառով, այսինքն՝ Տիրան Արշակունին և Միրզա Սարրաֆը կուրացվում են կոնկրետ այն բանի համար, որ նրանք չեն տվել օտարներին իրենցից պահանջված ձիերը⁵⁷³: Այս դեպքից հետո առաջին պլան է գալիս անարդար կերպով կուրացվածի որդին՝ Քյոոզլուն, որը պայքարում է բռնակալի դեմ առաջին հերթին հոր վրեժը լուծելու համար. Քյոոզլի էպոսում դա գլխավոր հերոսն է, իսկ 4-րդ դարի Հայաստանում՝ կուրացված Տիրան Արշակունու որդին՝ հայոց արքա Արշակ Երկրորդը, այսինքն՝ կուրորդին⁵⁷⁴: Ինչպես Քյոոզլու էպոսում հերոսը տարիներով կռվում է բռնակալների դեմ, այնպես էլ Արշակ Երկրորդը տարիներով պատերազմում է պարսիկների դեմ:

⁵⁶⁹ Այս անվան երկրորդ բաղադրիչը ըստ ազգագրագետ Արմեն Պետրոսյանի՝ ևս ունի առասպելական բաղադրիչ, այն է վարագ, որպես բացասական հերոս «սև հերոս»: Այս մասին տես Պետրոսյան Ա., նշված աշխ., էջ 61:

⁵⁷⁰ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի), Երևան, 1968, էջ 106:

⁵⁷¹ Նույն տեղում, էջ 109:

⁵⁷² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, (Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի), Երևան, 1981, էջ 333:

⁵⁷³ Պերպերեան Հ., նշված աշխ., էջ 28:

⁵⁷⁴ Ի դեպ, հայոց մեջ կույրի և նրա որդու հետ կապված կա նաև մեկ այլ ավանդազրույց, որը կապված է հանկարծակի կուրացած Արամ թագավորի և նրա որդու՝ կուրորդի Արայի (Գեղեցիկ) հետ: Տես Ահյան Ս., Կույր հոր ու իր տառապյալ որդիների առասպելական թեման և Քյոոզլին, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1997, թիվ 3 (93), էջ 148:

Հստակ վրիժառուի կերպար ունեցող Հայոց Արշակ Երկրորդ թագավորի կիսաառասպելական կերպարի և Քյոռոզլուի միջև բազմաթիվ գուգահեռներ կան: Այսպես, հայտնի է, որ Արշակը կառուցում է «Հովիտ կոչված Կոզ գավառում» մի դաստակերտ՝ Արշակավան անվամբ, որը, ըստ էության, հանցագործների, անարդարության գոհերի, հալածվածների ապաստանելու վայր էր⁵⁷⁵: Խորենացին նշում է արքայի հրամանը առ այն, որ ազատների քաղաք համարվող Արշակավանում բնակվողների վրա. *«դատաստան և իրավունք չի լինի»*⁵⁷⁶: Քյոռոզլին ևս ունենում է բերդ՝ Չամլըբել անունով, որն ամենայն հավանականությամբ գտնվել է Հայաստանում⁵⁷⁷ և մինչ օրս էլ մեզանում կան բազմաթիվ տեղանուններ, ամրոցներ և ամրոցների ավերակներ, որոնք կոչվում են Քյոռոզլու անվամբ: Չամլըբելը նույնպես եղել է մի վայր, ուր կարողացել են ապաստանել հալածվածներն ու հանցագործները: Ըստ Ս. Ռամազյանի՝ էպոսի արևելյան խմբի տարբերակներում Քյոռոզլուի Չամլըբել ամրոցը համարվում է. *«արդարության կատարելատիպ երկիր»*⁵⁷⁸, իսկ արևմտյան խմբի տարբերակներում *«ագնվաբարո ավազակների ապաստան»*⁵⁷⁹:

Մյուս գուգահեռը կարելի է տեսնել Արշակ Երկրորդի և Քյոռոզլու վրիժառուական կերպարի մեջ և կան բազմաթիվ դրվագներ, որոնք բացահայտ ցույց են տալիս, որ այդ կերպարների առաջնային հատկությունը վրեժխնդրությունն է: Այսպես, մի դրվագում, երբ Քյոռոզլուն հանդիպում է իր հորը կուրացրած թագավորին բացահայտ վիրավորում է նրան և ասում, թե լուծելու է հոր վրեժը: Իսկ Արշակ Երկրորդի պարագայում, երբ պատումում Շապուհի հետ քայլում է պարսկական և հայկական հողերի վրայով ու հայկական հողին հասնելով հանկարծ ըմբոստանում է և ասում. *«Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ ու քո որդիներին իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը»*⁵⁸⁰: Մեկ այլ դրվագ, երբ ընթրիքի ժամանակ պարսից թագավորի մոտ հայոց Արշակ թագավորը կրկին վիրավորական արտահայտություններ է անում Շապուհին և ասում. *«Եթե իմ երկիր հասնեն, քեզանից խիստ վրեժխնդիր կլինեն» (ընդգծումները իմն են Ռ.Մ.)*⁵⁸¹:

Որոշակի գուգահեռ կա նաև Արշակ Երկրորդի և Քյոռոզլու կյանքի վերջի մասին պատմող դրվագներում: Հայտնի է, որ Արշակը գերեվարվելուց հետո բանտարկվում է Անհուշ երկիրմաստ անունն ունեցող բերդում, իսկ Քյոռոզլուն էպոսի թուրքմենական տարբերակում իր կյանքի վերջում մտնում է քարանձավ կամ լեռնային քարայր⁵⁸² և սա, ըստ ազգագրագետ Ա. Պետրոսյանի՝ նույնական է Փոքր Մհերի, Արտավազդի և նաև Արշակ Երկրորդի վերջի հետ⁵⁸³:

Քյոռոզլու հայկական ծագման մասին կա ևս մեկ վարկած, որը թեև ավելի քիչ հավանական է, սակայն, այնուամենայնիվ, արժանի է ուշադրության: Այսպես, Ս.

⁵⁷⁵ Փավստոս Բուզանդ, նշված աշխ., էջ 159:

⁵⁷⁶ Մովսես Խորենացի, նշված աշխ., էջ 349:

⁵⁷⁷ Ռամազյան Ս., Քյոռոզլի (հողված երկրորդ), Իրան-Նամե, թիւ 1, Երևան, 1997, էջ 18:

⁵⁷⁸ Ռամազյան Ս., Քյոռոզլի (հողված հինգերորդ), Իրան-Նամե, թիւ 1-2-3, Երևան, 1998, էջ 73:

⁵⁷⁹ Նույն տեղում:

⁵⁸⁰ Փավստոս Բուզանդ, նշված աշխ., էջ 214:

⁵⁸¹ Նույն տեղում, էջ 215:

⁵⁸² Պետրոսյան Ա., նշված աշխ., էջ 60:

⁵⁸³ Петросян А., Армянский эпос и мифология, Ереван, 2002, стр. 170.

Ռամագյանի արժեքավոր հողվածաշարում հանդիպում ենք մի տեղեկության, համաձայն որի Քրոնոլոգի հայկական ծագումը բխում է ոչ թե հայոց Արշակ Երկրորդ թագավորի կերպարից, այլ հայոց Խորխոռունյաց ազնվական ցեղից և սրա համար նախ բերվում է լեզվական ապացույցը այն է, որ հայերի շրջանում հերոսը երբեմն անվանվում է Խոնոլի, այսինքն՝ Խորխոռունու որդի: Ռամագյանը մեջբերում է Ղ. Աղայանից մի հատված, որտեղ նշվում է, որ Քրոնոլոգի իրականում հայոց Խորխոռունյաց տոհմից մեկն է, որը դարձել է ավագակ և միացել ջալալիներին⁵⁸⁴: Այս վարկածի մեջ կարևոր է այն, որ հերոսը թեկուզ եթե ունի էլ հայկական ծագում փոխել է կրոնը և ընդունել իսլամ: Այս առումով նկատենք, որ Հայկական լեռնաշխարհ ներխուժած մուսուլման նվաճողների տիրապետության ժամանակ հայերի բռնի իսլամացումը չի շրջանցել նաև բարձր խավին՝ ազնվականությանը: Թյուրքական «Ասք Մելիք Դանըշմեղի մասին» էպիկական պատումում խոսվում է փոքրասիական ազնվականների կրոնափոխության մասին⁵⁸⁵: Հայկական ազնվական ընտանիքների իսլամացման մասին արաբագետ Արամ Տեր-Ղևոնդյանը գրում է. «Հայ իշխանական տների որոշ ներկայացուցիչներ 15-րդ դարի ծանր պայմաններում հարկադրանքի տակ հավատափոխ էին եղել՝ իրենց ճորտատիրական իրավունքները պահպանելու նպատակով»⁵⁸⁶: Մփյուռքահայ ուսումնասիրող Գ. Ամատունին նկատում է, որ արդեն 15-րդ դարում Վասպուրականի, Տարոնի, Բաղեշի հայ ազնվական ընտանիքները. «քիչ բացառությամբ մահմեդականություն էին ընդունել եւ մեծ մասամբ քրդացել են»⁵⁸⁷: Կրոնափոխված հայ ազնվականների մասին տվյալների ենք հանդիպում նաև Թ. Մկրտիչյանի գրքում, որտեղ նա նշում է, որ օրինակ Ռշտունիները և Մամիկոնյանների մի ճյուղը կրոնափոխվել և քրդացել են ու վարում են ցեղապետային (աշիրեթական) կենսակերպ ընդունելով համապատասխանաբար Ռեշքթա և Մամրկա ցեղանունները⁵⁸⁸: Եթե հաշվի առնենք վերը նշվածը, ապա չի կարելի բացառել, որ Խոնոլի անվանման այս ստուգաբանության մեջ նույնպես կարող է լինեն պատմական փաստին վերաբերող աղերսներ և հայ ազնվական ընտանիքների կրոնափոխության երևույթի ժողովրդական հիշողության այսօրինակ դրսևորումներ: Այստեղ կարող ենք նաև ենթադրել, որ հնարավոր է Խորխոռունյաց տոհմից մեկը կրոնափոխ է եղել տարբեր նկատառումներից կամ հարկադրանքից ելնելով և չի ընդունվել իր ազգակիցների կողմից ու նաև դրա համար էլ դարձել է ավագակ և հարել ջալալիներին:

Խոսելով Արշակ Երկրորդի և Քրոնոլոգի կերպարների միջև եղած ակնհայտ նմանություններին՝ Հ. Բերբերբերյանը եզրակացնում է. «Այսպես ուրեմն, ցորչափ Արշակի վեպեն անելի հին գրոյց մը երեւան չգայ, կրնանք ընդունիլ թէ Քեոնոլոգի գրոյցին մէկ

⁵⁸⁴ Ռամագյան Ս., Քրոնոլոգի, Իրան-Նամե, թիւ 4-5, Երևան, 1996, էջ 32:

⁵⁸⁵ Гарбузова В., Сказание о Мелике Данышменде. Историко-филологическое исследование, Москва, 1959, стр. 157.

⁵⁸⁶ Տեր-Ղևոնդյան Ա., Մահմեդական ամիրությունների բացասական դերը միջնադարյան Հայաստանի ճակատագրում, Արևելագիտության հարցեր, Երևան, 1987, պրակ 3-4, էջ 146:

⁵⁸⁷ Ամատունի Գ., Դարերու ընթացքին թրքացած հայեր, քրտացած հայեր, Նայիրի, Բեյրութ, 15, 05, 1980, թիվ 1-2, էջ 14:

⁵⁸⁸ Մկրտիչյան Թ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քիւրտերու գազանութիւնները, Գահիրե, 1919, էջ 112-113:

մասը Արշակի վեպին սերած է»⁵⁸⁹: Իսկ ազգագրագետ Ա. Պետրոսյանը նկատում է. «Քյոռոլուն իր մեջ ներառում է Արշակ Երկրորդի առասպելի հիմնական տարրերը՝ ձիու հետ կապված թյուրիմացության հետևանքով հոր կուրացումը և հերոսի վրեժը»⁵⁹⁰: «Հայկական վիպական ավանդության մեջ Քյոռոլու՝ որպես «կույրի որդու» բացահայտ նախորդն է Արշակ թագավորի վեպը «Պարսից պատերազմում»: Այս համապատասխանությունները ցույց են տալիս, որ «Քյոռոլին» շարունակում է, և չէր կարող չշարունակել, հայկական եւ հայաստանյան հնագույն վիպական ավանդույթը»⁵⁹¹:

Ամփոփելով նշենք, որ վերոնշյալ փաստերի, վարկածների և տեսակետների քննության արդյունքում կարող ենք ենթադրել, որ Քյոռոլու էպոսում միահյուսվել են տարբեր դարերի և ժողովուրդների իրական և էպիկական հերոսների կերպարներ ու դրանց մեջ էական տեղ ունի նաև հայոց Արշակ Երկրորդ թագավորի կերպարը: Քյոռոլու էպոսում անպայմանորեն կա հայկական միջավայրի ազդեցություն և միգուցե ջալալիական շարժմանը անդամակցած հայերը Արշակ Երկրորդի պատումի որոշ տարրեր փոփոխել և հարմարեցրել են իրենց ժամանակակցի՝ Քյոռոլու կերպարին, ինչի շնորհիվ էլ փոքր-ինչ այլափոխված շարունակվել և աշխարհագրական լայն տարածում է գտել հայոց արքայի կիսաառասպելական պատմությունը: Ուստի Քյոռոլու կերպարի մեջ պետք է տեսնել նաև հավաքական կերպարին բնորոշ տարրերն ու առանձնահատկությունները: Քյոռոլի էպոսի տարածվածությունը հայերի շրջանում խոսում է նաև այն մասին, որ անպայման այդ էպոսում և հերոսի մոտ ժողովուրդը տեսել է իրեն հարազատ բազմաթիվ տարրեր, այլապես օտար, պարտադրված հերոսը չէր կարող այդքան տարածում և ընդունելություն գտնել ժողովրդի շրջանում:

ОБ АРМЯНСКИХ КОРНЯХ ЭПОСА КЕРОГЛУ

Рубен Мелконян

(резюме)

Среди многих народов распространен эпос Кероглу, начало формирования которого принято относить к 17-ому веку. Наиболее распространенным является мнение, что эпос имеет тюркское происхождение, и разные исследователи подразделяют его на две группы: восточную и западную. Однако, некоторые исследователи отмечают схожесть как мотивов эпоса, так и образа Кероглу с событиями, имевшими место в 4-ом веке в Армянском царстве, и их конкретными участниками. Поэтому, существует мнение, что исторической основой эпоса стало не столько джалалийское восстание 16-17-го веков, сколько определенные события, произошедшие в Армянском царстве в 4-ом веке, а для некоторых элементов образа Кероглу прототипом послужил армянский царь Аршак Второй.

⁵⁸⁹ Պերպլերեան Հ., նշված աշխ., էջ 40:

⁵⁹⁰ Петросян А., указ. соч., стр. 169.

⁵⁹¹ Պետրոսյան Ա., նշված աշխ., էջ 61: